ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/196

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20676-2019 գրությամբ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.12.2019թ. թիվ ՊՆ/02/2793-2019 գրության հիման վրա, 12.12.2019թ. թիվ 26/26-1/20676-2019 գրությամբ նախաձեռնել է Ա/Ձ Հրաչյա Մարգարյանին (հետայսու նաև՝

Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>Ա/Ձ Հրաչյա Մարգարյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը մասնակցել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով ընթացակարգին և 13-րդ չափաբաժնի համար առաջարկված գնով զբաղեցրել է առաջին տեղը: Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը հրավիրվել է ՀՀ ՊՆ համապատասխան գնահատման և բանակցման կոլեգիալ նիստին, որտեղ ներկայացրել է մանրամասն, թե ինչ ապրանքներ է մտադիր մատակարարել, եթե կնքվի պայմանագիր: Հատկանշական է, որ այդ խորհրդակցություն- բանակցությունների ընթացքում շեշտադրված էր գնային հանգամանքը: Այնուհետև, որպես առաջին տեղը զբաղեցնող Մասնակիցը ներկայացրել է առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը: 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Մասնակիցը ստացել է ծանուցում այն մասին, որ ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ արձանագրության համաձայն Մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը մասնագիտական եզրակացության հիման վրա գնահատվել է հրավերի պահանջներին անհամապատասխան և հայտը մերժվել է:

2019 թվականի դեկտեմբերի 9-ին ՀՀ պաշտպանության նախարարությունը, թիվ ՊՆ/02/2793-2019 գրությամբ դիմել է նախաձեռնելու Ա/Ձ Հրաչյա Մարգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Մասնակիցը գտնում է, որ ՀՀ ՊՆ ներկայացրած պահանջն անհիմն է և ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասին 4-րդ կետի՝ բացառությամբ սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք ունեն անձինք, որոնք ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում: Նույն հոդվածի նույն կետում օրենսդիրը հստակ սահմանում է այն դեպքերը և հիմքերը և/կամ/ հանգամանքները, որոնց առկայության դեպքում ամսնակիցը կարող է ներառվել ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձանց ցուցակում: Մասնավորապես դրանք են՝

ա. ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. Գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ,

գ. Որպես ընտրված մասնակից մեկ անգամից ավելի հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

դ. Օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում համագործակցային վարքածի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար,

ե. երբ առկա է սույն մասի 3-րդ կետով նախատեսված հանգամանքը/որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու պահին նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության գամար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է/:

Միաժամանակ, համաձայն նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դրա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսինքն, օրենսդիրը հստակ սահմանում է տվել նախ մասնակցության սահմանափակումների մասով, ինչպես նաև մասնակցության իրավունք չունեցողների ցուցակում ներառելու հիմքերը: Սակայն, քննարկվող վարույթի շրջանակներում առկա չէ որևէ իրավական հիմնավորում, օրենսդրական հիմք:

Ավելին, հրավերով ներկայացված է գնման առարկա հանդիսացող «զովացուցիչ ըմպելիքի» տեխնիկական բնութագիրը, համաձայն որի՝ գնման առարկա է՝ գազավորված

ըմպելիք տարբեր, տեխնիկական պայմանների համաձայն, ընդհանուր խմբաքանակից 34% կոկա-կոլա, 33% ֆանտա, 33% սփրայտ տեսակների կամ համարժեք:

Մասնավոապես՝ գազավորված զովացուցիչ ըմպելիք «Կոկա -կոլա» կամ համարժեք տեսակի 1լ պլաստմասե շշերով:Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, գունանյութ /շաքարային կոլեր IV/, թթվանյութային կարգավորիչ /ֆոսֆորաթթու/, բուսական թուրմեր, կոֆեին: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, իսկ մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից ոչ պակաս քան 20 %, պիտանելիության ժամկետն արտադրման օրվանից ոչ պակաս 4 ամիս: Անվտանգությունը և մակնշումը ՄՄՏԿ N 021/2011 և 022/2011, «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Գազավորված զովացուցիչ ըմպելիք «Ֆանտա» կամ համարժեք տեսակի 1լ պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, թթվանյութեր /կիտրոնաթթու, նատրիումի ցիտրատ/, կայունացնող կոմպոնենտներ /գումակացիա, գլիցերինի խեժաթթուների եթերներ/, պահածոյացնող նյութեր, հակաթթվեցնող /ասկորբինաթթու/, գունանյութ /բետա-կարոտին/: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս 20 %, պիտանելիության ժամկետն արտադրման օրվանից ոչ պակաս 4 ամիս: Անվտանգությունը և մակնշումը ՄՄՏԿ N 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Գազավորված զովացուցիչ ըմպելիք «Սփրայտ» կամ համարժեք տեսակի 1լ պլաստմասե շշերով: Պարունակությունը՝ ջուր, շաքար, ածխածնի երկօքսիդ, թթվանյութեր /կիտրոնաթթու, նատրիումի ցիտրատ/, պահածոյացնող նյութեր /նատրիումի բենզոնատ/, անուշահամ նյութեր: Պոլիէթիլենային փաթեթավորմամբ, մեկ փաթեթի մեջ 12 շիշ: Պիտանելիության ժամկետը մատակարարման օրվանից, ոչ պակաս 20 %, պիտանելիության ժամկետը արտադրման օրվանից ոչ պակաս 4ամիս: Անվտանգությունը և մակնշումը ՄՄՏԿ N 021/2011 և 022/2011 «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի:

Ինչպես երևում է տեխնիկական բնութագրից, հրավեր հրապարակողը նշելով Կոկա-կոլա, ֆանտա, և Սփրայթ ապրանքային նշանները բնականաբար ցանկացել է համային առումով ասոցացնել իր կողմից հայցվող ապրանքների առաջարկները վերոգրյալ հանրածանոթ համերի հետ: միաժամանակ սակայն, հրավերում նշված է, որ կարելի է

առաջարկել կամ փոխարինող, այսինքն՝ դրանց համային նմանությամբ գազավորված և մնացյալ պայմաններին /պահպանման, պիտանելիության և այլն/ բավարարող ըմպելիքներ: Ինչ վերաբերվում է մերժման հիմքում դրված այն տրամաբանությունը, որ գնորդն ակնկալում էր ստանալ վերոգրյալ ապրանքային նշաններով հայտնի ըմպելիքները հրավերում բերված տեխնիկական բնութագրում, ապա դա անհնար է, որովհետև նույնիսկ համաշխարհային ճանաչում ունեցող նշված ապրանքանիշով արտադրվող ըմպելիքները չեն կարող համապատասխանել հայտարարատուի ներկայացրած պահանջներին:

Մասնավորապես՝ Մասնակիցը ցանկանում է անդրադառնալ մասնագիտական եզրակացությանը, որը հետագայում դրվել է Մասնակցին ընթացակարգից հեռացնելու հիմքում: Այսպես՝ մասնագետի պնդմամբ Մասնակցի կողմից ներկայացրած կոկո-կոլային փոխարինող ապրանքատեսակի մեջ բացակայում են բուսական թուրմեր, իսկ շաքարի փոխարեն նշված՝ փոխարինող ասպարտամ /E 912/: Ֆանտայի դեպքում՝ բացակայում է կայունացնող՝ գումակացիա կոմպոնենտը և շաքարի փոխարեն ներկայանում է նորից ասպարտամ /E 912/: Սփրայթի պարագայում՝ շեղումները հասցվել են մինիմալի, արձանագրվել է միայն ասպարտամ /E 912/-ը շաքարի փոխարեն:

Մասնագետները չեն նկատել երևի, որ նույնիսկ «Կոկա-Կոլա Հելլենիկ Բոլթինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ ընկերության կողմից արտադրողվող «կոկա-կոլա» ապրանքանիշով գազավորված ըմպելիքի բաղադրության մեջ նույնպես բացակայում են բուսական թուրմեր, «ֆանտայի» բաղադրության մեջ՝ կայունացնող գումակացիա կոմպոնենտը, իսկ ինչ վերաբերում է շաքարի փոխարինող ասպարտամին, ապա պետք է արձանագրել, որ այն աշխարհում տարածված և ամենալայն գործածում ստացած, անվտանգ շաքարի փոխարինող է , և որի առկայության փաստը ուղղակի նշված է ՖԱՆՏԱՅ-ի և ՍՓՐԱՅԹ-ի բաղադրության մեջ, իսկ ԿՈԿԱ –ԿՈԼԱՆ իր մեջ ներառում է գաղտնի կոմպոնենտներ, որոնք բաղադրությունն անհայտ է լայն մասսաների, ասել է թե տեխնիկական նույնությամբ դրա բնութագրումն անհնար է:

Վերոգրյալից հետևում է, որ ՀՀ ՊՆ նախաձեռնությունը Ա/Ձ Հրաչյա Մարգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով անհիմն է /հիմնավորված չէ փաստարկներով և հերքելի է իր իսկ կողմից ներկայացված ապացույցներով/, չի բխում օրենքից և ենթակա է մերժման:

Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/196 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.12.2019թ. թիվ ՊՆ/02/2793-2019 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգում (հետայսու նաև՝ Ընթացակարգ) Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով Մասնակցին համակարգի (armeps.am) միջոցով ծանուցվել է որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փատաթղթերը ներկայացնելու վերաբերյալ, սակայն Մասնակիցն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել: Հանձնաժողովը Մասնակցին ծանուցել է երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3.1-ը /առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը/, պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված մասնագիտական եզրակացության հիման վրա, հանձնաժողովը գնահատեց հրավերի պահանջներին անհամապատասխան և մերժեց Ա/Ձ Հրաչյա Մարգարյանի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/196 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:25-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/196 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով գնանշման հարցման

ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը Ընթացակարգի 13-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20676-2019 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 09.12.2019թ. թիվ ՊՆ/02/2793-2019 գրությունը և կից փաստաթղթերը, Ա/Ձ Հրաչյա Մարգարյանի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխա-նության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթեր չներկայացվելու կամ ամբողջական չներկայացվելու կամ ներկայացված փաստաթղթերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, ներառյալ կոմիտեի տրամադրած տեղեկատվության հիման վրա, իսկ ապրանքների գնման դեպքում՝ նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը: Ընդ որում, եթե անհամապատասխանությունն արձանագրվել է կոմիտեից ստացված տեղեկատվության արդյունքում, ապա սույն կետում նշված ծանուցմանը կցվում է նաև այդ տեղեկատվությունը պարունակող փաստաթղթի բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.11.2019թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի II ՄԱՍ-ի 3-րդ կետի 3.1 ենթակետի համաձայն՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ նույն հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 3-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 3.1-ի:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանի կողմից փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 26.11.2019թ. Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցել է Մասնակցին երեք աշխատանքային օրյա ժամկետում անհամապատասխանությունը շտկելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2019թ. նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանի կողմից ներկայացված հավելված 3.1-ը (առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը) պատասխանատու ստորաբաժանման կողմից 04.12.2019թ. ներկայացված մասնագիտական եզրակացության հիման վրա գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է հրավերի պահանջներին չհամապատասխանող և Մասնակցի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ հրավերով սահմանվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու, ինչպես նաև առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ապրանքի ամբողջական նկարագիրը չներկայացվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Այսպիսով՝ Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 4-րդ կետի 4.3 ենթակետով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետում հանձնաժողովին է ներկայացնում ապրանքի տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև առաջարկվող ապրանքի անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Մասնակիցը հայտի թիվ 1.1 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու նպատակով նույն դիմում- հայտարարությունում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին և պարտավորվում է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը:

Տվյալ դեպքում արձանագրում եմ, որ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն ծանուցվելուց հետո չի ներկայացրել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, որից հետո Կարգի 47-րդ կետի համաձայն ծանուցվել է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու վերաբերյալ:

Մասնակցի կողմից Կարգի 47-րդ կետով սահմանված կարգով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրում արձանագրվել են անհամապատասխանություններ: Մասնավորապես, համաձայն Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից տրամադրված եզրակացության՝

- կոկա-կոլա կամ համարժեք գազավորված ըմպելիք՝ առաջարկվող ապրանքատեսակի բաղադրության մեջ բացակայում է կոֆեին և բուսական թուրմեր, իսկ շաքարի փոխարեն առաջարկվել է շաքարի փոխարինող՝ ասպարտամ (E912):

- ֆանտա կամ համարժեք գազավորված ըմպելիք՝ առաջարկվող ապրանքատեսակի բաղադրության մեջ բացակայում է կայունացնող կոմպոնենտներ (գումակացիա, գլիցերինի

և խեժաթթուների եթերներ), պահածոյացնող նյութեր, համաթթվեցնող (ասկորբինաթթու) և շաքարի փոխարեն առաջարկվում է շաքարի փոխարինող՝ ասպարտամ (E912):

- սփրայտ կամ համարժեք գազավորված ըմպելիք՝ առաջարկվող ապրանքատեսակի բաղադրության մեջ շաքարի փոխարեն առաջարկվում է շաքարի փոխարինող՝ ասպարտամ (E912):

Նույն եզրակացության համաձայն՝ Ընթացակարգի տեխնիկական բնութագրով հստակ սահմանված է մատակարարման ենթակա գազավորված ըմպելիքի քանակները՝ ըստ տեսակների, սակայն առաջարկվող տեխնիկական բնութագրով մատակարարման ենթակա քանակները՝ ըստ տեսակների տոկոսային հարաբերությամբ նշված չեն:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում՝ բացառությամբ մասնակցի կողմից գնային առաջարկի և հայտի ապահովման ներկայացման դեպքերի:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ արձանագրում եմ, որ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-7/9» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում թույլ է տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պարտավորության խախտում, ուստի առկա են Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 12.12.2019թ. թիվ 26/26-1/20676-2019 գրությամբ Ա/Ձ Հրաչյա Մարգարյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և Ա/Ձ Հրաչյա Մարգարյանին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**